

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 64/4

5 դեկտեմբերի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Ելենա Շկաբարնյաի գանգատը լրացուցիչ առաջադրված պարտավորությունները վերանայելու վերաբերյալ:

Ա/Ձ Ելենա Շկաբարնյաի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Ելենա Շկաբարնյան հայտնում է, որ 23.12.2014թ. գրանցվել է որպես անհատ ձեռնակատեր, սակայն ոչ մի տեսակի գործունեությամբ չի զբաղվել:

10.02.2015թ. սխալմամբ ստորագրել է շրջանառության հարկ վճարող համարվելու դիմում, որից հետո նույնպես ոչ մի տեսակի գործունեություն չի իրականացրել:

Ա/Ձ Ելենա Շկաբարնյան այժմ գտնվում է հղիության յոթերորդ ամսում, սպասում է երկրորդ երեխային, միայնակ մայր է: Պետության կողմից ոչ մի եկամուտ չի ստանում: Ա/Ձ Ելենա Շկաբարնյային մերժել են երկրորդ երեխայի նախաձեռնաբերական գումարը վճարելու համար, քանի որ համարվում է աշխատող անձ: Անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը չի կարողանում դադարեցնել իր հաշվին կուտակված կենսաթոշակային պարտքի՝ 60.000 դրամ ապառք և 32.000 դրամ տույժի գումարները չվճարելու համար:

Ա/Ձ Ելենա Շկաբարնյան խնդրում է նվազեցնել վերը նշված պարտավորությունը, քանի որ ոչ մի տեսակի եկամտի աղբյուր չունի և չի կարողանում ստանալ նախաձեռնաբերական 126.000 դրամը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Ելենա Շկաբարնյանը 23.12.2014թ. գրանցվել է որպես անհատ ձեռնակատեր և 10.02.2015թ. սխալմամբ ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, սակայն որևէ գործունեություն չի իրականացրել և շրջանառության հարկի հաշվարկներ չի ներկայացրել:

Հարկային մարմնի կողմից ղեկավարվելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով 2015թ. համար հաշվարկվել է եկամտային հարկ ընդամենը 92.000 դրամ, այդ թվում՝ հարկ 60.000 դրամ, տույժ 32.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված և (կամ) «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով

հարկ վճարողները եկամտային հարկը հաշվարկում և վճարում են ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

Այսինքն, եկամտային հարկի գծով պարտավորություն առաջանում է, եթե անհատ ձեռնարկատերը հարկային մարմնում առկա տեղեկատվության համաձայն տվյալ հարկային տարվա ընթացքում փաստացի զբաղվել է վերը նշված օրենքներով սահմանված հարկվող գործունեության տեսակներով (ստացել է արտոնագիր՝ արտոնագրի գործողության ամիսների համար, ներկայացրել է ելակետային տվյալներ՝ հաստատագրված վճարով հարկվող ժամանակահատվածի համար, ներկայացրել է շրջանառության հարկի հաշվարկներ՝ եռամսյակային հաշվարկներում ընդգրկված ամիսների համար):

Քննարկվող դեպքում, քանի որ Ա/Ձ Ելենա Շկաբարնյաի կողմից մինչև 01.01.2016թ. փաստացի գործունեություն չի իրականացվել, շրջանառության հարկի հաշվարկներ չի ներկայացվել, հետևապես «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դրույթը կիրառելի չէ: Նշված դրույթը՝ ՀՀ ՖՆ 01.02.2016թ. N 1 պաշտոնական պարզաբանման համաձայն, գործում է 2016 թվականից սկսած նաև փաստացի գործունեություն չիրականացրած վերը նշված հարկ վճարողների նկատմամբ, եթե վերջիններս չեն ներկայացրել գործունեություն չիրականացնելու մասին հայտարարություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. Ա/Ձ Ելենա Շկաբարնյաի գանգատը բավարարել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչությանը.

Կատարել Ա/Ձ Ելենա Շկաբարնյաի եկամտային հարկի պարտավորությունների վերահաշվարկ՝ անձնական հաշվի քարտից նվազեցնելով 92.000 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ